ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Լաբորանտի

<<Հաստատում եմ>>

Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի տնօրեն

________________ Գ. Սանթրոսյան

<<29>> 08 2022 թ.

1.Ընդհանուր դրույթներ

1.1Լաբորանտի պաշտոնը ընդգրկվում է քոլեջի ներքին կառուցվածքային միավոր համարվող ուսումնաօժանդակ տարակարգում:

1.2 Աշխատողին ՀՀ օրենսդրությամբ և քոլեջի կանոնակարգի համաձայն պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քոլեջի տնօրենը:

1.3 Լաբորանտն անմիջականորեն ենթարկվում է ամբիոնի վարիչին, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին:

1.4 Լաբորանտն իրեն ենթակա աշխատողներ չունի:

**2.** Ուսումնական հաստատության լաբորանտի պաշտոնը զբաղեցնողը պետք է՝

2.1 Ունենա միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն:

2.2 Տիրապետի տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներով աշխատելու հմտություններին (Microsoft Word, Excel ծրագրերին):

2.3 Առաջնորդվի աշխատանքային պայմանագրով, քոլեջի կանոնադրությամբ , քոլեջի ամբիոնների կանոնակարգով, ներքին կարգապահական կանոններով:

2.4 Կատարի ուսումնական գործընթացի հետ կապված ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի, ամբիոնի վարիչի հանձնարարությունները:

2.5 Ամբիոնի վարիչի հանձնարարությամբ մասնակցի ամբիոնի ընթացիկ աշխատանքների կատարմանը:

2.6 Իրականացնի լաբորատոր աշխատանքի ընթացքի վերահսկում և օժանդակում:

2.7 Վարի ամբիոնի գործավարությունը :

2.8 Արտադրական պարապմունքների ժամանակ ապահովի ցուցադրական-ուսուցողական նյութերը, սարքավորումները:

2.9 Օժանդակի դասախոսներին հավաքագրել, տպել և քոլեջի համապատասխան կայքում տեղադրել մոդուլային ուսումնառության նյութերը:

**3. Լաբորանտն իրավունք ունի՝**

3.1 Մասնակցել քոլեջի իր գործունեության առնչվող խնդիրների քննարկմանը

3.2.Ամբիոնի դասախոսներից պահանջել և ստանալ ամբիոնի գործունեությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկություն:

3.3 Մասնակցել քոլեջի ենթակառուցվածքային աշխատանքներին, որտեղ քննարկվում և որոշվում են ամբիոնի գործունեությանը վերաբերվող հարցեր:

3.4 Տնօրենին ներկայացնել առաջարկներ, աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ :

3.5 Օգտվել քոլեջի տեղեկատվական ֆոնդերից, տեխնիկական հնարավորություններից, բուժական և այլ ծառայություններից:

**4 Պատասխանատու է՝**

4.1 Պաշտոնի անձնագրով նշված աշխատանքները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար՝ պատասխանատվություն է կրում համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի սահմանված կարգով:

Աշխատող՝